

ՏՆՕՐԻՆ - ԿՐԿՆԱԳՐԱԳԻՏ

Հ. ՄԱՄՈՒՐԻԱՆ

ԲԱԺՄԼՈՐԴԱԳՐՈՒՅԻՆ

| | |
|-----------|---------|
| ՏԱՐԵՒՆ | 500 ՂՐԻ |
| ԿՐԿՆԱԳՐԱԳ | 250 |
| ԵՌԱՄՍԵԱՅ | 150 |

Բաժանորդագրությունը կ'սկսվի ամեն ամսոյ 1 ին և 15 ին



Fondateur
M. Mamourian
 Directeur - Rédacteur en chef
H. MAMOURIAN
 ARÉVÉLIAN MAMOUL,
 JOURNAL ARMÉNIEN
 QUOTIDIEN

100 ՓԱՐՍ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ

100 ՓԱՐՍ

ԱՆՎԵՐՋԱՆԱԼԻՆ...

Քաղաքականության կարգադրությունը բոլոր խնդիրներն վերջի վերջոյ լուծումի մը կ'յանգին Ամենագիտար հարցեր եղբայրացութեան մը կ'հասնին: Միայն հայկական հարցն է որ չէ կորելի լուծուի և այսպէս կամ այնպէս կազմադրի մը մէջ ձուլուի:

Հայոց դժբաղդութեան արդիւնքն է, թէ Հայաստանի աշխարհագրական դիրքին հետեւանքը: Բնականաբար այս վերջին պարագան է որ կ'հնճուակ խնդիրը և ձգձգումներու տեղի կուտայ:

Գերմանիոյ հաշտութեան գաշնագրին ստորագրուելէն վերջ, ինչպէս դիտելի է, հաշտութեան համաձայնագրի գործերն սկսան յամբարձնել ընթացքը: Մեծ պետութեանց պետերը թողուցին գործոց ընթացքը իրենց արտաքին գործոց նախարարներուն, և այս վերջիններն՝ մէն մի որոշման համար կ'հարկադրուին իրենց վարչապետներուն հաւանութիւնը ստանալը:

Քայց խնդիրն անոնց հաւանութիւն ստանալու և որոշման մը յանգելուն վրայ չէ, այլ հայկական հարցի գեւեռս անորոշ վիճակի մը մէջ տալով սկսումն է որ վերջին ծայր մտահոգ բրած է համար հայութիւնը:

Համաձայնական պետութիւնն էր չենք կարծիր որ վճարական ազգու քայլեր անհնչու տրամագրութիւն չունենան Հայաստանի մէջ և անոր սահմաններուն վրայ օղորդու ռեւոլյուցիոններուն նկատմամբ, որոնք հասած տեղեկութեանց վրայ հիմնուելով, մեծ մտասնջութեան կ'մտանին ոչ միայն հայկական վերին շրջանակներն, այլ նաև Երևանի հանրապետութիւնն որ ստանալու ինքնուրուի վրայ կուտակուած թուրք ազգայնական անունին տակ պիտակուած հրոսախուժներու գէմ ստիպուած է պաշտպանել թրքական գաղթականներն և միև կողմէ արթուն հակել Ասորպատականի և Վրաստանի սպառնալից ու թշնամական կեցուածքին վրայ:

Մինչդեռ թուրք կառավարութիւնն ձեռքի տակէ կ'ընտան քիւրտ ու իսլամ ցեղեր գէպի հայկական գուառներն հարձակուով լեցնել, այսպէս մեծամասնութեան ու փոքրամասնութեան խնդիր մը գրգռելու համար:

Միթէ եւրոպա և Ամերիկա պիտի խափուին ու ընդունին թուրքին այս ածաբար կատակերգութիւնը, չենք կարծիր և հիմնական փաստեր ունինք թերահաւատ ըլլալու: Նոյնիսկ յենցով անպիտան գահիճի անգամներէ շատերու պաշտօնական խօսքերուն վրայ, որոնք ի լուր աշխարհի շարաարեցին թէ՛ եթէ հայ մը իսկ մնայ աշխարհի վրայ, գործնալ պիտի կազմեն Հայաստան մը:

Որովհետեւ՝ եթէ մեծամասնութեան ու փոքրամասնութեան խնդիրներ յարուցանեն, ուղղակի համամտութիւն մը եղած պիտի ըլլայ Էնվեր-Թալատ-Նազիմեան ծրագրին, որոնք Հայերու բնաջնջումի հրեղանի գաղափարն յղացան՝ հայկական խնդիրն ինքնին լուծած ըլլալու համար:

Հայոց այս անյողի ու անարանալի իրականութեան տալիս ինչո՞ւ սակայն Համաձայնական թոյլտրեցին որ թուրքն այսքան առաջ երթայ, ինչո՞ւ զինք չփոցնելու տեղի տուին, երբ մեղով անհամեմատաբար աւելի իրապիկ թուրք հոգեբանութեան, պիտակ էին թէ՛ անոնց վախաւարական բնազդներն ու անորժակներն չափ ու սահման չունին և միշտ արիւնքի մէջ կ'մխրձուին, իրենց գոհացումն ու ծարաւը յաղիցնելու համար:

Տարակոյս չունինք թէ՛ Հայերու սպառնացող նորանոր վտանգներու առաջն պիտի կրնայ առնել Համաձայնութիւնն և Անգլիոյ երկուսը առաջ տուած վերջնագրին՝ ազգայնական անունին տակ գործող հրոսախուժներու նկատմամբ, պիտի զսկէ գանտք և վերջ գնէ արիւղ անասուգութեանց:

Փոքր-Ասիոյ խորքը մեկնող կարգ մը յանձնախուժներն որոնց պաշտօնները գծուած են անկասկած, մեծ յոյս ունինք թէ՛ մտատուր ապագայի մը մէջ վերջնական եզրակացութեան մը պիտի յանգին և փրկին հայութեան խրեհակներն և կարելիութեան միջոցներ շնորհեն անոնց վերագոտնալու հայրենիք և սկսելու վերաշինութեան նուիրական գործին:

Համաձայնական պետութիւններն և մանաւանդ Անգլիոյ ու Ամերիկայ չափաթի թողուն անշուշտ որ նոր անիրաւութիւններ գործուին և Հայկական անվերջանալի խնդիրն պիտի լուծեն Հայոց բազմաթիւներուն և պահանջումներուն համապատասխան եղանակով մը:

Հ. Մ.

ԱՆՑԻՔԵՐ ՈՒ ԱՆՁԵՐ

Չինագաղարի նախընդգործուն էր հիմակ, այդ օրերը, ալ պատմութեան կը վերաբերին — տակաւին հարստական՝ զինուորական իշխանութեան, կը մնայի թագաւորացի մէջ, որուն պատուհաններէն ակնարկա կը սեւեռուէր Սէրալ-Պոլսուի բացերը, Գրգ Գուլէսի ցոյնքը, վերջապիտ արևուն շառայներու տակ խարոյկի նման, Իսկիւտարի տուններուն ապակիները կը բոցափայլէին, ու ես, պուլսու կախ՝ Շը-

նոյնքէն անուն հասարիս Էջերը կը սեւագրէի անընդհատ վարք, արարթրմանին առաջին յարկին մէջ, խուզարկող պաշտօնները շարունակ իսկ կը փնտռէին:

Քաղաքականութեան մէջ յանկարծակի փոփոխումներ կը նշմարուէին արդէն, Թալատի հաւանական անկումին վրայ կը խօսէին օրուան լրագրները, ու մենք հեռավար կ'օգտակէինք այդ իրականութեան:

Առտու մըն ա՛լ, լրագրները բերին ինձի, թագաւորացի մէջ, Դանլի-ճին անկումը, չնապայլին ատումները արդէն մի առ մի փետուած էր, կը

մնար անոր, իր նահանջի գիծը պատրաստելը:

Ինձի համար մասնաւորապէս վախի սեւէ պատճառ չկաւ ալ ես, քանի որ, նոր գահիճին մէջ կ'մտնէր նաև բոլորակ պատերազմի ընթացքին մեր ընտանիքին բարերարը Քէլիտ Արիֆ փաշա:

Ոչ ոք կրնար ձերբակալել իս, առանց իր պաշտօնը վտանգելու, խցիկէս արագ տատուով մը փողոց նստցի ինքզինքս, խելայից ու շնչապատ, արագ այցիքէ ետք բարեկամներու սրտուեցուածք, առժամաբար, իրեն խմբակի և ըբբբբբ պաշտօնավարի մէջ ասին նոր հաստատուած Հալաթի թերթին խմբագրատունը, որուն գոյնը կը մնար անորոշ ու տարտալ...:

Անգլ-նշանաւոր ժէշըը թաուզկնտ այլևս ձերբագրատուն իր արգելափակութեան կ'կոչի նման կուտար Բարձրագոյն Խուս, և կը մեկնէր կողմերը, զիտպաղարի բանակցութիւնները վարելու համար:

Թալատ չնապայլը, երէկուան մեծագոր վեղիքը, փառքի, արիւնքի, սփռնիքու պահանջարկ սպառ ինքնաշարժէն իջած՝ հետիտան կամուրջէն կ'անցնէր, երեսփոխանական ժողովի նրբանցներուն մէջ իր ապրանքները շարունակելու համար, և երէկ, իրեն շարժէն անարեկողները, սոյսը կառուրջին վրայ, թուրք և արձամարհանքով կ'ողջունեն զինքը, տիտանութեան կրճատումներու ընդմէջէն, ու ինքս ալ, որ վերջին հիւզ ամիտներուն մէջ շարունակ թաքստող փոխելու հարկադրուել էին, հիմակ, ազատ ողին մէջ, պաշտօնատուտէ պաշտօնատուն կը զեղբուէի, օրուան կարևոր լուրերը կորցնելու համար պաշտօնատարներէ:

Այն օրը հրահանգ ստացել էին թերթին խմբագրատան և թուրք շաշունի կրակէն ձեռնալ Շահապետունի, Չինագաղարի մասին ստոյգ լուր մը առնելու մասին վերապատու չէին:

Արեւելեան սովորական քաղաքավարական արարողութիւններէ ետք անգաւորուել էին, վերապատուելի գրասեղանին գէմ, և գուրը կ'զգուտած էր արուած հրամանի մը վրայ:

Մեկ ընդմիջող չըլլայ հրամայած էր վերապատուել իր սենեկապանին:

Պաշտօնապէս չէ, բայց վերապատուելու ան տունն, բայց, վերապատուելու կրնամ հաստատուել ձեզ թէ՛ Չինագաղարը կատարուած իրողութիւն մըն է ալևս, բայց եթէ, թերթին մէջ իմ կողմէս այս լուրին հազորգուելը գրուել, լաջորդ օրը պաշտօնապէս պիտի հերքեմ...:

Անմիջապէս խմբագրատուն տար շուշուս, և լսկոնիկ տողերով, սրտուեցուած որ, յաջորդ օրուան թերթին մէջ նշանակուել այս լուրը:

Մեր թերթը, միակն էր որ յաջորդ օրը կ'աւար այս լուրը որուն վրայ, Ամիկ խմբագրատան մէջայ նուրի և սերիներ հետաքրքիր կուզային իրողութիւնը հաստատել խմբագրատունէն, և մէ մէկ թերթի անէր այս լուրը Այն օրը Հալաթի տատուտէ հազարներով սպառնացուած Բայց, յաջորդ օրը, այս լուրը կ'հերքուէր գործնականորէն, համաձայնական օգտուտներու տարմից մը կը սեր կոծէր յաջորդ օրը պատերազմ, նախարարութեան չէնքը, և ուսմբեր կը նետու Մասնաւոր փաշայի, և սերիչ հանրային վարչուտ վրայ, և ես, գործնականորէն կը համոզուէի թէ՛ քաղաքականութիւնը որքան շնական իրողութիւններու ենթակայ է երկրի վրայ:

Քաղաքական Լուրեր

ԵՂԻՊՏՈՒՆ «Թան»ի կը գրեն.— Եգիպտոսի մէջ Ֆրանսական ձեռնարկները, որոնք իրենց թուով և խորհուրդով թախամ կը կազմեն, երկրին իւրապական տնտեսական գործունէութեան հիմը, չեն խուսափած վտանգուել քաղաքական յուզումներէն Ֆրանսական շահերուն ինչպէս նաև անպիտան և եղբայրական շահերուն համար փափաքիլ է որ ազատական և զորաւոր օրէնքներ, Եգիպտոսի մէջ բերեն խաղաղութիւնն, պաշտպանողներու և պաշտպաններու միջև թերթերը կը ծանուցանեն թէ, Ֆրանսայի և Անգլիոյ միջև կ'ընտուած համաձայնութիւններու համաձայն, Եգիպտոսի մէջ Ֆրանսական կարգ մը կազմափոխութիւններ, մասնաւորապէս թղթատունները, պիտի վերանայ, որոնք հաստատուած էին 1826 ին և թէ, 1904ի համաձայնութիւնը գանտք յարգած էր: Մենք կը կարծենք թէ խնդիրը դեռ կանխաձայն է, Մարտի և Եգիպտոսի համար, Բարիքի և Լօտտոնի միջև եղած բանակցութիւնները կ'ըստպանեն դեռ եղբայրացութեան մը և երկու կողմէ վաւերացման Ամեն պաշտպանի, կարելի չափի ըլլայ ըմբռնել թէ Ֆրանսական թղթատունները կ'ընտուեն Եգիպտոսէ, մինչդեռ Թանձերի մէջ անպիտանը կ'մնայ 1904է ի վեր, փոխադարձ եղած առուելութիւնները և զիջողութիւնները հարթած են շատ գոտարութիւններ կրկու կատավարութեանց միջև:

ԵՐԱՅԱՐԿ օգնուած մը, որ Միլանէն մեկնած էր գէպի Վեհտիկ, վերապատուելի Վեհտի մօտ ինկած է վար, 1400 մէթր բարձրութիւնէ: Կազմածը կրակ տաւած ըլլալով մէջի անձերը, 15 հոգի, բոլորն ալ տնթացած են: Չօհեբու մէջ կը գանուէր «Գորիէրէ Տէլլա Սէրա»ի «Սէրա»ի խմբագրատանները «Կալէթա Տէլլա Սերա»ի տնօրէնը՝ «Սէրա»ի խմբագիր՝ «Իլ Մօնտ»ի սընորէնը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՍԵՐԱՅԻ աղթակիցը, Պ. Շ. ֆոն Վէկան Հանգրի մէջ, տնտեսականութիւն մը ունեցած է մարաթիս շինակալարիկ հետ, որը հետաքրքիր յայտարարութիւններ ըրած է նախորդ քայլերին գատավարութեան մասին: Մար-Շախուր, քայլերին և իր գործապետներուն գատավարութիւնը նմանցուցած է, հոսմէական շրջանի եղած պիւնկարութեանց, և աւելցուցած է. — Վոյ ես, գիտեմ թէ իմ կայսրը պատերազմ չուզէ, անիկա է և կը մընայ իմ կայսրը Որքան տունն որ մարդ գոյութիւն պիտի ունենայ, պատերազմներ պիտի ըլլան, և գերման ժողովուրդը պիտի կրնայ վերականգնել: Ես իր յարթութիւնը չափալ տեսնեմ, բայց իմ օրգիս այդ երջանկութիւնը պիտի ունենայ: Գերմանիա ընկճուած չափալ մնայ, որովհետեւ ան աշխարհիս վրայ սուքուութիւն մը ունի կատարելիքը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ իշխանը Լօմաճէ մեկնած է գէպի Բարցմաւթ, ուրիկ «Բիտուտե» զրահաւորը գինը պիտի փոխադրէ Գանատա և Մ. Նահանգները: Այս ճամբորդութիւնը պիտի տեւէ 3-ամիս: Կալէթի իշխանին միջև նաւահանգիստ ընկերակցած են թագաւորը և

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ուրախութեամբ քաջաբերում էր ընթերցողներու համակուսակներն, և գոհացում ապրում համար օրուան պահանջներուն, հակառակ նորանոր զոհողութիւններ քննել ստիպուելուն, որչա՞մ է յառաջվրայ կիրակիէ սկսեալ Ա. Մանուկ հրատարակել 4 էջերով:

ԵՐԷԿ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս 21 Օգոստոս 1919
Հոտոնի Հասարակած Խորհրդարանին մէջ Հօրտ Ճօրճ իր արտասանած առին մէջ յայտարարած է թէ, Ամերիկայի պատասխանը շատ մտաւալուտ է Հայաստանի յանձնառութիւնը բնորոշելու մասին:
Ամերիկեան յանձնախումբը, երեկ Պոլսէն մեկնած է դէպի Բարիդ:
Թուրքիոյ զանազան մէջ, Համաժողովը գրած է պայման մը, որու համեմատ թուրք կառավարութիւնը կ'ստիպուի յանձնել բոլոր իթիհատ սկան պետերը: Նոյնպէս, կը կարծուի թէ իրենց անշարժ և շարժուի ինչքերը ևս պիտի գրաւուին:
Նախագահ Ուիլսոնը զօրավար Հարրիսի հրաման տուած է Հայաստան երթալու և քննելու տեղւոյն կայսրութիւնը: Զօրավարը արդէն ճամբայ կըստ է Պրէսթէյն Պոլիս կարճ ժամանակ մը մնալէ վերջ, զօր. Հարրիս պիտի անցնի Հայաստան:
Հունգարական նոր կառավարութիւնը, Աւստրիայէ պահանջած է Պէշա Բուսի և իր մեղաւորներուն յանձնուիլ:
Թրքական դաշինքին բոլոր փոխ-նախարարները հաւաքում մը ունեցած են Բ. Դրան մէջ, նախագահութեամբ վարչապետին:
Պարկաստանի Շահը Ահմէտ խան Պոլսոյ մէջ երկու շաբաթ մնալէ յետոյ պիտի շարունակէ իր շրջանը:
Սուրիոյ բնակչութեան մեծամասնութիւնը պահանջած է Ֆրանսական պաշտպանութիւնը:
Համաձայնական մասնախումբ մը, զօրավար Տէնիքիսի մօտ երթալով բանակցած է անոր հետ, Ռուսիոյ և համաձայնական երկիրներու միջև առեւտրական յարաբերութիւնները վերահաստատելու համար:
Այսքանի կուսակալութեան ներքին կայսրութիւնը քննելու պաշտօն ունեցող համաձայնական յանձնախումբը, երէկ նկատի առած է անգլիական դեսպանատան մէջ զանազան խառն յանձնախումբերու տեղեկագիրները:
Մայրաքաղաքի ոստիկանութիւնը կը ծանուցանէ թէ, 52 ոսկինոց կեղծ դրամատուներ շրջաբերութեան գրուած են:
Մարտիտա Ֆօշ Վեյմարի ժողովին ուղղած է ծանուցագիր մը, պահանջելով Սուրբիի պարպումը:

«Ազգէ՛ք ՏԸ Յ՛՛՛ Լ՛՛՛ ԲՅՅՕՐԻ՛նը հրատարակէ յետագայ երկու հետազոտութիւնը, որոնք փոխանակուած են Աւստրիոյ կոյսեր Շարլ Ա. և Վիլհելմ Բ. միջև, 1918, հոկտ. 30ին, թուական մը, ուր Աւստրիա զինադադար մը կնքելու համար իր առաջին քայլը առաւ: Աւստրիոյ կայսրը իր զինակցին կը հետադարձը այսպէս:

Այս առաւել ստիպուեցայ իտալացիներուն տաղաքակիչ զինադադար մը զինուորական կայսրութիւնը ալեւս անպաշտպանելի դարձած ըլլալուն համար: Բայց եթէ իտալացիք պայման դնեն որ թրքոյի Գարիբոլի ճամբաները, թարմիսի Պրէնէրի և Սիտակահի երկաթուղիները, պատու բացուին մեր թշնամիներուն առաջ, այն առեւն ես պիտի անցնիմ գերմանական աւստրիացիներու գլուխը, զինու. զօրութեամբ արգիլելու համար այս յառաջացումը կրնաս այս մասին վճարած ըլլալ: Ուրիշ ազգութեանց գունդերուն վրայ նոյն վստահութիւնը չիմ կրնար ունենալ:

Սրտագին և հաւատարմօրէն՝ ՇԱՐԼ

Վիլհելմը Բ. այս հետազոտին հետեւալ կերպով պատասխանած է:
«Ես յուզումով կարգապի ձեր հեռագիրը զինադադարի առաջարկութեան վերաբերեալ: Համոզուած եմ թէ, գերմանական աւստրիացիները, իրենց կայսեր առաջնորդութեամբ, միակ մարդու մը պէս պիտի դէմ կենան ամէն կարգի ամօթալի պայմաններու, և ձեզ շնորհակալ կ'ըլլամ քանի որ, դուն տակաւին կ'ուզես ինձ տալ ապահովութիւն:

Հաւատարիմ բարեկամութեամբ՝ ՎԻԼՀԵԼՄ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ պետութիւնը, իր բանակին և նաւատորմին պետերուն հաստատած է մեծ հասոյթներ: Նուիրելով նաև ազնուապետական տիրոջաներ: Ծովակալ Պէթի կոմս եղած է, միւս ծովակալները պատանի տիրոջ ստացած են Մարաշիստ շէրի, ստացած է կոմսութեան տիրոջ և զօր. Ալէմպի գերկոմսութեան, Բիլմէր և Պենկ պառնութեան:

Ազգային Անցուկարծ

Ստանայի առաջնորդարանէն Իզմիրի առաջնորդարանն նամակ մը հասած է, ուր կը նկարագրուի տեղւոյն բազմաթիւ որակերու տարազեկ սննդի թշուառութիւնը, և անհրաժեշտ ծախսերու համար հարկ եղած դրամին չգուժութիւնը և խնդրուի Իզմիրէ մասնաւոր դրամական օժանդակութիւն մը Բաղաք. ժողովը պատասխանելէ առաջ, Գաւառ. ժողովոյ նկատողութեան պիտի յանձնէ օգնութեան այս առաջարկը:

Զամանակի է որ Ստանայի առաջնորդարանը Իզմիր կը դիմէ, փոխանակ Պոլսոյ խնամատարութեան դիմելու, քանի որ Իզմիրէ զրկուած նը պատանիները այլևս Պոլսոյ խնամատարութեան միջոցաւ տեղի կուենան և Իզմիրի կողմէ մանաւանդ Ատա'ա կամ Կիլիկիա զրկուած մեծագումար դրամներն, ստացուած տեղեկութեանց համեմատ, չեն գործածուի բուն նպատակին: Կ'երևի թէ Ատանայի նպատատարացը կամ առաջնորդարանը Իզմիրէ քանի մը անգամներ շատ զրկութեամբ իրենց խնդրած գրամներն ստանալով յարմար գտած են կրկին Իզմիր դիմել: Սակայն այժմ խնդիրներն փոխուած են և Իզմիրի հանգանակութեան մասնակցողներ և մեծագումար արձանագրուողներէ շատեր բացարձակապէս կ'մերժեն Իզմիրէ գրատ այլուր ծախսել այդ գումարները: Փառ. ժողովը որոշած է Գաւառ. ժողովոյ նկատաւան յանձնել խընդիրն, սակայն նոյնիսկ եթէ Գաւառ. ժողովը որոշէ որոշ գումարներ զրկել Իզմիրէ դուրս և արձանագրողներն մերժեն վճարել, ինչ արժէք կուենալու: Չարտի որոշումն, հետևաբար

չ'աջանալու թեամբ գործել և որոշում տալ պիտի թելադրէինք Գաւառ. ժողովին իր հեղինակութեան բան մը վրայ չափու համար: Իրաւէ որ Պոլսոյ խնամատարութեան եթէ կարեւոր գումարներ արամադրուի որոշում մը տայ Գաւառ. ժողովը չենք կարծիր թէ՛ ընդդիմութեան բողոքի: Այս Պոլսոյ խնամատարութեան կ'մնայ այդ գումարներն պատշաճօրէն յանձնածելու փափուկ պարտքան:

Երէկ քաղաքէս մեկնեցաւ դէպի Եւրոպա Պ. Մարգար Էֆրիլէր:

Սեփաստիացի տարագիրներէն Տ. Արմենիցա Միլոսեանի հասցէին նամակ մը եկած է: Կր խնդրուի ստանալ, պատմահանէ, Մարգար Մէստեանի գեղարարը, Տրգանուէի Լ. Ներսէսեանէ:

ՏԻՐԱՆ Ա. ՅԱՂԱԿԻՄԵԱՆ ՄԱՐԻ Մ. ՏԻՐԱԳԻՐԻՔԻՆԵԱՆ ԱՄՍՈՒՍԱՅԱՄ

Իզմիր, 17 Օգոստոս 1919

Կիրակի գիշեր ընտանեկան շրջանակի մէջ տեղի ունեցաւ Պ. Անդրէաս Յովակիմեանի որդւոյն Պ. Տրգարնի ամուսնական հանդէսը ազնիւ Օր. Մարի Մ. Տրարգիքիքիանի հետ, կնքահարութեամբ Պ. Յ. Կարապետեանի: Պատկի արարողութեան կ'նախագահէր Տ. Յովհան Մ. Վ. որ այս օրուս առթիւ գեղեցիկ յորդորական մը խոսեցաւ ի մեծ գոհունակութիւն նորապրակ ամուսին և հրաւիրեալներուն:

Ուրախութեամբ իր շնորհատուութիւնները կ'ներկայէ Պ. և Տ. Տ. Յովակիմեանի և երկու կողման պարագայից այս երջանիկ ամուսնութեան առթիւ:

Պ. Տրգարն Ա. Յովակիմեան իր ամուսնութեան առթիւ 20 ո. և Պ. և Տ. Յովհար Կարապետեան Պ. Տրգարնի ամուսնութեան առթիւ 20 ո. կ'նուիրեն Ա. Կ. Որբանցի:

Տեղական Լուրեր

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ

ՓՈՒՐԻ-ԱՍԻՈՅ մէջ միօրինակ ժամ մը հաստատելու համար, Օգոստոս 15/28է սկսեալ, ժամը ճիշդ 12ին պիտի արձակուի թնդանութի հարուած մը: Այս ժամը պիտի հազորդուի, գաւառի անթիւ հեռագրի կայաններու, Իզմիրի կեդրոնական կայանէն: Զինուորական բոլոր իշխանութիւնները հրաման ըստացած են շարժելու համաձայն այս նոր ժամէն, սկսեալ Օգոս. 15/28 էն: Իրաւաւ բռնակէ հրամանաբար Զօր. ՆիՏէր

ՈՒՄՈՒՐԼՈՒՅ նոր եկած զինուորական անձ մը խղճալի կերպով կը նկարագրէ այդ շրջակայքի աւազակայտում բերուն վիճակը: Զէյպէքիքի, զանազան խումբերու բաժնուած կը վերագրան իրենց գեղերը իրենց հետ բերելով Այսրենէ կողպատած աւարները: Աւարներու բաժանման պահուն, աւազակներուն միջև կը պատահին արիւնհանգ կռիւներ: Հրոստիտուութեան պետերը, իրենց բոլոր միջոցները կը գործածեն զանոնք վերակազմակերպելու համար և աւազակներուն կը խոստանան գործելու լայն ազատութիւն հաւանական նորանոր կողպատաներու պարագային, քաղաքներու և գեղերու մէջ:
Հիլիէն, բանակի կողմէ գրաւուած վայրերու մէջ խիստ միջոցներ ձեռք առնուած են կարգապահութիւնն վերահաստատելու և բնակիչներուն անգործութիւնը սպառնալու համար: Զօրաւոր Միլին այս միջոցներուն գործադրութեան իր հաւանութիւնը տուած է:
Գրաւուած բոլոր քաղաքներուն մէջ որոշուած է հաստատել արտակարգ պատերազմական ատեաններ, որոնց պիտի յանձնուին երկրին խոզվարդ տարրերը:

ՍԱԼ ՏԸ ՎԱՆԴ

Վ. ԿԱՆՈՆ
Այսօր ժամը 4ին կ. ե. հրատարակային անուրդ 5 հակ մանիֆատուրաի (հիւսուածեղէն), 19 հակ աւրուած թէնպէքի և 250 երկրտանեակ գուլպաներու:
Վաճառումը կանխիկ:
Տեղեկութիւն:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կը փոխամ պատ. թերթիդ միջոցաւ հրատարակու շնորհակալութեամբ Գորակիտի Կարմիր խաչի մասնաճիւղին որ ստուգելով անկար վիճակս, Պ. Տ. Գաւառիանի միջոցաւ, 20 ոսկիի օգնութիւն շնորհեց զինուորութեան խնդրու վերադարձած զուկիտ դարձանման համար:
ՄԱՐԻՄ ՊՅՅ 'ՁԻԱՆ

ՏԻՐ. Յ. ԳԱՐԻՆԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ
ՆԵՐՔԻՆ. ԿԱՆԱՆՅ ՍԻ ՏԳԱՅՈՑ
Հիւսուողութիւններու
Հիւսուող կ'ընդունի բացի կիրակիէ ամեն օր: Առաւուտ ժամը 10-12ին եւ կ'ետը 3-5:
ՊԱՇՏՈՆԱՅԷԼԻՆ.— Հայոց բող Մօսս փողոց թիւ 3:

«ԱՐԹՕՆԻՔ» լսարանական մրու. թիւն 13րդ հաւաքոյթը տեղի պիտի ունենայ 24 Օգոստ. կիրակի ժամը ճիշդ 10.30ին (Կ. Ա.) Հոնիփոխեանի արահը պիտի բանախօսէ Տ. Յովհան Մ. Վ. Կարապետեան, նիւթ կ'ընթ և բխարիքն:
Մուտքը ազատ է:
Կը խնդրուի նախանձանդիր ըլլալ ճշգրտապահութեան:

ՎԵՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս 22 Օգոստոս 1919
Հաշտութեան համաձայնութիւնը պիտի վերակիր իր աշխատութեանց և թուրքիոյ հաշտութեան զանազան նկատի առնելու համար, լիցա ճօրճ և Հօրտ Քըրքըն վերստյ պիտի գան:
Հասած ինչ ինչ տարածայնութիւններու համեմատ՝ Ամերիկա թուրքիոյ յանձնառութիւնն չպիտի ստանձնէ:
Գնդ. Հասթէյ թիֆլիս հասած ըլլալը կը հեռագրէ:
Հաշտութեան Համաձայնութիւնը երեք օր զողարէ մը ետք Մ. Բիչոնի նախագահութեան տակ գումարում մը ունեցած և քննած է Պուլկար. հաշտութեան պայմանները:
Ֆրանսայի մէջ թերթերու վրայ գրուած գրաքննութիւնը ջնջուած է:
Էմիր Ֆէյզաա Սուրիոյ մէջ նախարարութիւն մը կազմած է:
«Մաթէն» կը գրէ թէ՛ հանրային պարտուց վարչութեան պարտական է թուրքիա 2 ու կէս միլիոն ֆր. և թուրքիոյ մէջ զանուած երկաթուղիներուն կէսէն աւելին Ֆրանսական ըլլալով, Հաշտ. Համաձայնութիւնը ուղարկութեան կը յանձնէ այս պարագաները:
Պատերազմի ժամանակամիջոցին մէջ այն Գերման զինուորականներն որոնք գրաւեալ հողամասերու մէջ սփռուի գործած են, սկսած են յանձնուիլ Համաձայնականներու: Անոնք պիտի դատուին միջազգային դատարանի մը կողմէ:
«Կէսօպէն» զրահաւորի պարագան պիտի քննուի թուրքիոյ հաշտութեան պայմաններու քննութեան տակն: